ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» ապրիլի 2015թ. **N___-Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 10-ի հ.270-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականությունը համարվող Քանաքեռ 14-րդ փողոցի հ. 40 շենքի հ.7՝ 85.16 քմ մակերեսով բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.24072013-01-0234 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Հասմիկ Եղիազարյանին։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սույն որոշման նախագծով նախատեսվում է Երևան համայնքի սեփականություն համարվող Քանաքեռ 14-րդ փողոցի հ.40 շենքի հ. 7՝ 85.16 քմ մակերեսով բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.24072013-01-0234 վկայական) անհատույց սեփականության իրավունքով տրամադրել Հասմիկ Եղիազարյանին:

Որոշման նախագծի նախապատրաստման համար հիմք է հանդիսացել Հայ Առաքելական Եկեղեցու Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տեր Նավասարդ Արքեպիսկոպոս Կճոյանի միջնորդագիրը՝ Հասմիկ Եղիազարյանին բնակարան տրամադրելու վերաբերյալ:

Հասմիկ Եղիազարյանը այս տարիների ընթացքում իր ներդրումն է բերել Արարատյան Հայրապետական թեմի հոգևոր-կրթական ծրագրերին՝ կազմակերպելով և իրականացնելով դասավանդումներ, ուխտագնացություններ, բազմաբնույթ միջոցառումներ Արարատյան Հայրապետական թեմում գտնվող բազմաթիվ կառույցների աշխատակիցների, Երիտասարդաց միությունների անդամների, թեմի երգչախմբի, բարեգործական գրասենյակի (միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ երեխաներ) շահառուների, կիրակնօրյա դպրոցների աշակերտների համար:

Թեմի «Սուրբ Հովհաննես Կոզեռն» կրթամշակութային կենտրոնի լուծարումից հետո Հասմիկ Եղիազարյանի ջանքերով վերոհիշյալ կենտրոնում դասավանդվող «Սրբանկարչության և մանրանկարչության հմտություններ» առարկան, առանց ուսումնառության ընդհատման, իր շարունակական գործունեությունը գտավ Հայ Եկեղեցասեր Երիտասարդաց միության կրթադաստիարակչական կենտրոնում՝ որպես հոգևոր մշակույթի քարոզչության եզակի ճյուղ՝ հետագա տարիներին բեղմանվորելով թեմը բազմաթիվ մեծ ցուցահանդեսներով: Հասմիկ Եղիազարյանը 2013 թվականի սեպտեմբեր ամսից հանդիսանում է Արարատյան Հայրապետական թեմի «Շողակն Արարատյան» պաշտոնաթերթի գլխավոր խմբագիրը: Հոգևոր և ազգային գիտելիքի և արժեքի վրա հիմնված թերթի ձևաչափին Հասմիկ Եղիազարյանը երիտասարդական նոր եռանդ և լիցք է հաղորդել՝ լուսաբանելով թեմական ողջ իրադարձությունները, միաժամանակ հանդես գալով բազմաբնույթ նոր խորագրերի նախաձեռնությամբ՝ այդպիսով լուսաբանելով և քարոզչական գործունեությամբ պատշաճ ներկայացնելով հոգևոր գիտելիքը հայ մարդուն, քրիստոնյային:

Հասմիկ Եղիազարյանը այն բացառիկ նվիրյալներից է, ով Հայ Առաքելական Եկեղեցու գաղափարները և դավանությունը տարածում է հայ երիտասարդների շրջանում, սրբազան ավանդությունների համաձայն հային կրթելու և նրանց մեջ բարոյական, հայրենասիրական ոգի և մայր եկեղեցու արժեքների մեջ գիտակցություն սերմանելու համար, ինչը կարևորագույն դեր և նշանակություն ունի ազգային գաղափարախոսության պահպանման և զարգացման գործում:

Հաշվի առնելով նշվածը, ինչպես նաև Հասմիկ Եղիազարյանի ընտանիքի բնակարանային պայմանների բարելավման խիստ անհրաժեշտությունը, մշակվել է Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ